


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ
Նամակ կամ ուր եւ քրտիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ
Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Եզրի գրառի համար տրեկն. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :
Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ քրտիւն եւ չի տրուիր :

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱՆՁՆԱՍՊԱՆ

Իր սիրահարէն Լքուած աղջիկը որ պա-
տուհանէն վար կը նետուի կամ չքաւորու-
թեան ծայրն հասած մարդը որ կ'իսաւառ ա-
ծուիսին մուսուլմը խեղդամահ կ'ըլլայ խուցին
մէջ, պատառ մը հաց չի գտնելուն համար,
ի՞նչ մանրակրկիտ նկարագրութիւններ ու հո-
գեքանական տողեր կը ներշնչեն գրողներուն :
Անձնասպանութեան վիճակագրութիւններ կը
պատրաստուին, պատճառներ կը քննուին ու
զատակարգութիւններ կ'որոշուին, ընկերային
հարցեր մէջտեղ նետուելով : Ո՞վ երբէք խոր-
հեցաւ այն հայ սղուն վրայ որ դեռ չաբաթ
մը առաջ, Պոլիս, փողոցին մէջտեղ, ոտա-
կաններէն հալածական, կրակ բրու անոնց
վրայ որ չի մօտենան ու յետոյ հրազէնը իր
ուղեղին դարձունելով՝ անձնասպան եղաւ :
Ո՞չ իսկ անունը իմացանք. եւրոպայի թղթա-
կիցներ իրենց հեռագրերուն մէջ երկու բա-
ռով յիշատակութիւն մը ըրած էին. քսանը
հինգ տարեկան էր. ահա՛ բոլոր գիտցածնիս :
Եւ սակայն այդ կտրիճ երիտասարդը
անձնասպանութեան ամենէն վսեմը գործեց .
յուսահատ մը չէր. ընդհակառակը. ինքը
հայրենասիրական նպատակի մը կը ծառայէր,
զաղափարի մը վարած էր հոգով մարմնով,
ու մինչեւ վերջը մաքառեցաւ անոր համար .
բիրտ ուժին առջեւ իսկ, որ կուգար պաշա-
րել ու կաշկանդել զինքը, դատաւիք չեղաւ .
այն ահռելի ճգնաժամին մէջ խորհեցաւ ան-
շուշտ որ իր ձեռքակալումը, իր կրեւիք չար-
չարանքները, իր հարցաքննութիւնը կրնային
ուրիշներու աղէտին պատճառ ըլլալ. վարա-
նելու միջոց չունէր. հազիւ ըստէ մը կը մնար
իրեն՝ ընեղիքը որոշելու համար. մեռնիլը նա-
խամեծար սեպեց :

Ու քանի՞նք իրեն պէս, այս վերջին տա-
րիներս, մահուան գիւղը նետուեցան անխռով.
ձեռքերնին չի գողաց երբ հրազէնին բլդակը
քաշեցին իրենց ճակտին ու հառաչ մը չեղաւ
չրթներնէն երբ գետին փռուեցան : Անթաղ,
անյիշատակ մնացին, առանց գուցէ վրանին
լացող մը ունենալու :

Հոն է անոնց մտածման բարձրութիւնը
ու հոգիին մեծութիւնը, որ հաւատքի մը փա-
րած են այնքան բուռն որ ճշմարիտ հերո-
սութեան մը կը տանի զիրենք. ինչ որ ուրիշ-
ներուն համար պատրանք է, իրենց համար

իտեալ մըն է. առաջինները բան մը չեն կոր-
սնցուներ իրենց դատողութեան մէջ սխալած
ըլլալով. վերջինները կեանքներնին վրայ կու-
տան : Դեռ ի՞նչ կրնային ընել :

Այս կեղատառ ու եսամոլ գարավերջին
մէջ, ուր բարբերը կապականութիւն ու կեղծա-
ւորութիւնը արժանիք կը դառնայ, կուգէ՞ք
գտնել ճշմարիտ անձնութիւններ հետքեր .
փնտռեցէ՞ք փողոցին մէջ անձնասպան եղող
այդ տղաքներուն քով որոնք ո՛չ իսկ իրենց
անունը կը յայտնեն : Գուցէ խաբուածներ,
մուրտուածներ ըլլան, բայց կուրօքն հաւ-
տացած են թէ ծառայութիւն մը կը մատու-
ցանին իրենց ազգին ու այդ ներշնչումով զո-
րացած, աշխարհի վայելքը, կեանքի տենչը
կը թողուն այնքան հեշտիւ որքան չափի ու-
զէր թողալ գրասեղանին առջեւ բազմած պա-
րոն մը իր աթոռը՝ ընկերոջը պզտիկ ծառա-
յութիւն մը մատուցողներու համար :

Ա Յ Ժ Մ Է Ո Ւ Թ Ի Ի Ն

Ինչ որ Պոլիսէն կը վախճուի օգոստոս
19/31ի գիշերուան համար, ինչ մնաց Եգիպ-
տոսի մէջ պատահէր : Սուրբանին գահակա-
նութեան տարեդարձը հակաֆրիսոնեական
ցոյցերու տեղի տուաւ տեղ տեղ. բնիկ ժո-
ղովուրդը՝ արդէն իսկ գրգռուած, ինքն աշ-
խարհէր ինչո՞ւ, մասնաւորապէս յոյն տա-
րին դէմ յարձակելու փորձեր ըրաւ, խա-
նութիւն կողոպտելով ու զիստակաւորներ ծե-
ծելով :

Այս մոլեռանդական արարներու քա-
տարաւայրերն եղան Զակազիկ, Թանքա եւ
Սիւեզ :

Զակազիկի մէջ, 300 տեղացի ստահակներ հա-
մախքուելով սկսան փողոցները պողտել ու անար-
գել ու ծեծել իրենց ճակտուն վրայ գտնուած յոյ-
ները : Այս պղտիկ խռովումը նիւթական վնասներ
հասուց հեղեհական հաստատութիւններու : Եւրո-
պացիներ ալ վիրաւորուեցան : Պահ մը գրգռուած այն
աստիճանի հասաւ որ տեղի ծանր հետեւանքներ կը
վախճուէր : Տեղական իշխանութիւնը գտնարաւ ա-
ռաջին ասին :

Թանքաի մէջ, ծեծ եւ կողոպտոց չիկար,
բայց արար խռովանիւն վայնասունները ու-
րոնք տեղեկին երկու ժամ անընդհատ. «Մահ
յոյներուն» կը պողային : Յոյն եւ եւրոպացի
տարր սագնապաշի գիշեր մը անցուցին :

Սիւեզի մէջ, ժողովուրդը ամեն տեղի
առելի հպարտացած ու գրգռուած կեռեւար
թուրք բանակին յաղթանակներէն :

Հոս, կը գրէ թղթակից մը, խռովումը թաղէ
թաղ կը շրջէր՝ հայհոյութիւններ արձակելով Յու-
նաստանի թագաւորին, արքայական ընտանիքին ու
մանաւանդ հեղին իշխանահայերուն դէմ : Ու չէին
մոռնար անկէք կարգաւ նաեւ բրիտանական թեան դէմ :
Յոյներուն դուռները կը բաղկան, կը զրոյցան, կը
հրախիւսին գտնուք դուրս ելլել, իրենց հետ կուրիւ
փողոցին մէջ :

Յոյներու պաղարկումութեան ու լուրջեան շնոր-
հիւ, արիւն չի հոսեցաւ. նիւթական վնասն ալ մեծ
բան մը չէ :

Գահիրէի մէջ, ուր աւելի հոծ էր բազմութիւնը,
համեմատաբար անշուն էին եղած ցոյցերը : Քանի
մը հարիւր արար ստահակներ Եգիպտոսի պարտէզին
շուրջը դարձան, պողտուկներ արձակելով անգլիա-
ցիներուն դէմ որոնք կը խնդային իրենց բաւքէ-
թին տակէն : Ուրիշ խռով մը, որուն չէյն մը կա-
ռաւորողէր, Մուսթիէն անցնելով դէպի Ալքաթն ուղ-
ղուեցաւ, ուր ոտակականութիւնը ցրուեց զանաւոր :

Տեղական մամուլը, — եւրոպական քեր-
թերը բնականաբար — արդար զուրոյր մը
եւ ցաւ կը յայտնեն այս ամենուն դէմ : Յան-
ցանք ոչ այնքան ժողովուրդինն է որքան
անոնց որ կը գրգռեն զանոնք :

Կայծ մը կրակ կրնայ դառնալ : Ամենէն
վսանգաւոր խաղերէն մէկն է ամբոխին
դիւազգրգոռութիւնը փորձել ուղեղը. երեւոյթ-
քի գիշերուան միջադէպները մեծ աղէտ մը
չի պատճառեցին, բայց երբ եւրոպացի եւ
յոյն կորսնցունէին իրենց պաղարկումները,
արիւնահեղ կռիւներ կրնային ծագիլ :

Կ. ՊՈԼՍՈՑ ԴԵՊՔԸ

Եւրոպական Սուրհանդակը նորագոյն ուե-
ղեկութիւններ կը բերէ մեզ՝ օգոստոս 6/18ի
դէպքին հետեւանքներուն ու յաջորդ պարա-
գաններուն վրայ :

Պոլսոյ թերթերէն առնելով, ծանուցած
էինք Պատրիարքական չրջաբերականի մը ըն-
թերցումը եկեղեցիներուն մէջ : Բօլիթիցէ Բօ-
րէսքոնէնէն թղթակիցը սապէս կ'ամփոփէ
զայն .

«Օրմանեան Պատրիարքին չրջաբերականը
որ ամսոյս 10/22ին կարդացուեցաւ մայրաքա-
ղաքի հայ եկեղեցիներուն մէջ ու բացատրուե-
ցաւ քարոզիչներուն կողմէ, հետեւեալ չորս
կէտերը կը պարունակէ . 1. Պատրիարքը կը
յայտարարէ թէ դէպքին օրը երբ ինք ելլ-
տեղի պալատը զնաց՝ եղածին համար ցաւ
յայտնելու, երախտագիտութիւն մատուցա-
նելու որ այս առթիւ հայերուն դէմ որ է

զրգուսան առաջին առնուած էր և միանգամայն հայ ազգին հաւատարմութեան հաւատարմութիւնը տալու, Սուլթանը պատասխանել տուեր է Պատրիարքին թէ ինք հայ ազգը պատասխանատու չի բռնել եղածներուն համար և թէ գէպքին հեղինակները միայն կը ճանչնայ յանցաւոր: 2. Պատրիարքը կը յանձնարարէ բոլոր քարոզիչներուն՝ հանդարտութեան և կարգապահութեան յորդոր կարգալ իրենց հօտին: 3. Ոչ եկեղեցիներու չըլափակին մէջ և ոչ ալ դպրոցական չըլանակներուն մէջ պէտք չէ թոյլատրել կասկածելի մարդերու ներկայութիւնը: 4. Իւրաքանչիւր հայ անհատ պարտի հսկել կարգապահութեան վրայ, որպէսզի հայերուն գէմ ունէ ծայրայեղութիւն գործելու պատրուակ չի բռնուի»:

Թղթակիցը կը յարէ թէ Գում-Գաբուի մայր եկեղեցիին մէջ, այս շրջաբերականի ընթերցումէն ետք, Պատրիարքն ինք անձամբ նոյնիմաստ քարոզ մը խօսելու է: Իր անձնական նախաձեռնութեամբ որոշած էր սոյն շրջաբերականի առաքումը, բայց իր որոշումը գործադրելէ առաջ պաշտօնագիր մը ստացեր է դատական և կրօնական գործոց նախարարութենէն որ, կայս. Իրատէի մը համաձայն, կը հրաւիրէր զինքը այդ տեսակ յայտարարութիւն մը հանել:

Հաւանական է որ Պատրիարքական շրջաբերականը գաւառաց առաջորդներուն ալ պիտի զրկուի, եկեղեցիներուն մէջ կարգացուելու համար:

— Իտալական Սեֆօյօ լրագրին Կ. Պոլսոյ Թղթակիցը կը յայտարարէ թէ Իզգէթ պէյ, Սուլթանին մտերիմ խորհրդականը, անձամբ գացեր է հարցաքննել Միսաք անուն հայ փաստաբանը որ Պապը-Ալիի պատուհաններուն տակ ունի նետած էր: Միսաք յայտարարել է թէ նոր attentatներ ալ պիտի ըլլան: Իզգէթ պէյ մտաւորապէս տուել է խեղճ մարդը, որպէսզի իր գործակիցներուն անունները երեւան հանէ, բայց ի վեր: Միւս բանտարկեալ հայերն առանց չուրի կը ձգուին եղեր բանտին մէջ, որպէսզի ծարաւութեան չի դիմանալով հարկադրուին խոստովանութիւններ ընել:

— Ղալթիոյ գէպքին իբր հեղինակ ձերբակալուած երկու հայերու վրայէն պարսկական անցագիր ելեր է:

Եւրոպական քանի մը թերթեր լուր մը կը հրատարակեն Կ. Պոլսէն, թէ Թօքաթի կուսորածին պարագլուխ եղող ոճրագործներուն մահուան դատապարտութիւնը մշտնջենական աշխատութեան վերածուել է Սուլթանին իրաւունքով:

Ասոնք, տասնըվեց հոգի, Մահուաէի շուգենաւով մը Սամսոնէն ճամբայ հանուել են Ափրիկեան Տրիպոլիս փոխադրուելու համար:

Ք Ր Օ Ն Ի Կ

Ֆրանսան Ռուսիոյ կը միանայ և Տիկին Նուարդ Պէնեան խուսիքն կը բաժնուի:

Շարժուա ամենէն կարեւոր եղելութիւններն են ասոնք:

Քանի մը հարկը միլիոն ժողովուրդ, կրօնքով տարբեր, կառավարական ձեւով իրարու հակառակ, առ ոչինչ կը համարին նախկին ատելութիւնները,

կը մոռնան Նարոչեան, սկզբունք կը փոխեն, թող կուտան որ զրոյակները զիրենդիստոնում մը ունենան, Պոթէ Չարա քանին կը լծորդի Մարսէլէ, զին, նախկին Բոսնիէն մը Աստուծոյ փոխանորդին ձեռքը կը սեղմէ, հանրապետութիւն մը միահեծան կայսրութեան մը համար կուտայ, խափարը քիւֆին կը խառնուի և շանթաւեան վտակային, մութիւնը վիլլա Ֆրանս կը պոռայ և Հանօթօ խառաւօ կը կրկնէ, միլիոնաւոր ֆրանքներ ծովը կը թափուին, Ֆէլիքս Ֆոռ ստամբուլի խաղաղութիւն կուենայ և Նիքոլա երկրորդ սատարի վրայուալ մը, հիւսիսային կոշտութիւնը հարաւային նրբութեան հետ կը հաշտուի, այս ամենը կըլլան, այո, և վերջապէս այդ խառնաշփոթութիւնէն միւլթիւնը կը ծնի, համեմատութիւն մը առաջ կուգայ, սէր և գութ, գութանք Նէվայի և Սէնի տիւրքը կը ծածկեն, միասնութիւն ամեն կողմ և համաձայնութիւն ամեն տեղ:

* *

Միւսակ մեր դերասաններն են որ չեն կրնար համաձայնիլ:

Տիկին Նուարդ, նորեկ մը հայ թատրոնին համար, մեզի անձանթի պատճառներով կը խզէ ամեն ինչ, հրաժեշտ կուտայ ընտանիքին, կը խեղդէ ձայնը կոկորդին մէջ, կը զրկէ հասարակութիւնը գեղեցիկ ձայն մը լսելէ, շնորհալի դերասանուհի մը տեսնելէ և ահա անպաշտօն *tête à tête* մը մէջ կուգայ տանձնատու... ուրիշ դերասանուհի մը ընկերակցութեամբ:

Եւ խումբը կը ջլուտուի, կը վհատի հասարակութիւնը, թատերասէրները կը յուսահատին:

Հայ դերասանութեան աւանդական պատուութիւնն է այս:

Որքան որ վարագոյրը բաց է, հայ դերասանները իրարու համաձայն ըլլալու երեւոյթը ունին, անգամ մը որ կը գոցուի, ետին մի նայիք:

Դերասանուհին ներկի վրձինը ի ձեռին կը կռուի, դերասանը գուլպաները հագած միջոյնի կը պոռայ, տնօրէնը կամացուկ մը կանհետի և տուտակ ծախողը կաներեւութանայ:

Վարդուհեանէն սկսեալ մինչեւ Պէնեանի վերջովեալ խումբը միշտ այսպէս եղած է, վարագոյրին ետին:

Կերեւայ որ տիկին Նուարդ չէ տխրածած այս կեանքէն, *coulisse*ներու մթնոլորտը խախտած է իր թատրոնի վրայ ունեցած հաւատքը և առանց մէկ երկու ըսելու Աղբքսանդրիոյ մէջ թողած է խումբը, ընկերները, հասարակութիւնը և *express*ին թեւերուն մէջ նետելով ինքզինքը՝ շունչը առած է Գուհիք ուր հասնելուն պէս հայ *divette*, Չուխաճեանի աշակերտուհին, գոհացումի *ut de poitrine* մը արձակած է կայարանին մէջ, գոնէ այսպէս կը վկայեն տեսնողները:

Բայց անդին Պէնեանը այդ տեսնողութեն չի թուանար, իր գիտցածէն քալ մը անդին չանցնիր, և հին, տոկոսն նաւապետի մը պէս խումբին ղեկը կտանէ ի ձեռին և կը վարէ զայն ինչպէս կուզեն օգտապարկ մը որուն ղեւ ղեկ մը չեն կրցած չինել, ու անշուշտ այս վայրկեանիս իր թաւ պէխերուն տակէն կը մրմնջէ Ռիկիթթի ծանօթ յանկերգը:

La donna e mobile

Օղապարկը օրին մէկը կրնայ գէկ մը ունենալ, կիններն են որ երբէք չպիտի ունենան, անանկ չէ՞ Պ. Պէնեան:

* *

Թատրոնի վրայ խօսինք, քանի որ անով սկսանք Պաքուէն՝ լուսաւորութեան այդ կեդրոնին — քիչ մը քիչ քարկւղ չարտադրեր Պաքու — ուրախալի լուրեր մեզ կը համին թատրոնի վերաբերմամբ:

Տեղուն ինտելիկէնտ երիտասարդութիւնը ամեն միջոցներ ձեռք առած է, կըսուի, կանոնաւոր և մը նայուն թատերական խումբ մը ունենալու համար այդ քաղաքին մէջ, առողջիկայ ձմեռէն սկսեալ:

Այդ նպատակով հրաւիր ղրկած են Պոլսոյ քանի մը ծանօթ դերասաններու և դերասանուհիներու, այդ նորակազմ խումբին միանալու համար:

Վերջինէ Գարաբաշի, Տիկին Հէքիմեանի, Սիւրանոյշի, Քնարիկի և Միսկեանի, Ֆատուլեանի, Թրեանցի, Հոլասի անունները կը գտնենք այդ ցան:

Ինն մէջ և կիսունք թէ ատոնցմէ շատեր արդէն իրենց սրայմանագրութիւնը կը բացեն:

Կերեւայ թէ քարկւղի, վտակայի երկիրը միութեան երկիր մըն է միանգամայն, օրինակ ձեզի Ֆոթի սյցերութիւնը և Պաքուի թատրոնական հրաւերը:

Ուրեմն երգենք Պոթէ Չարա քանին որ կը նշանակէ «խաղաղութիւն պէս համով բան չկայ»:

Յ. Ա.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Երբ ամբողջ ֆրանսական ազգը ցնծութեան մէջ է որ վերջապէս Չարը արտասանեց դաշնակից բառը՝ Ռուսիոյ և Ֆրանսայի համար, թերթեր կան որոնք կը պնդեն թէ ֆրանսական նախարարութեան թախանձաձագին ստիպումներուն վրայ գործածուել է այդ բացատրութիւն: Պ. Հանօթօ պաշտօն ունի եղեր համոզել Մուրափիէֆ կոմսը որ եւ թէ կայսրը ակնարկութիւն չընէ դաշնակցութեան, ո՛չ միայն նախարարութեան՝ այլ եւ հանրապետութեան նախագահին կացութիւնն անտանելի կը դառնայ և երեսփոխանական առաջիկայ ընտրութեանց մէջ արմատականներն ու ընկերվարականները մեծամասնութիւն կը շահին: Չարը այն պայմանաւ համակերպել է եղեր, որ ֆրանքաւուս համաձայնութեան յայտագիրը խաղաղասիրական ըլլայ:

Արմատական թերթերը կը պահանջեն որ, եթէ իրօք դաշնակցութիւն մը կնքուած կայ Ռուսիոյ և Ֆրանսայի միջեւ, անոր գլխաւոր արամագրութիւնները խորհրդարանին հաղորդուին:

Պ. Ֆէլիքս Ֆոռ՝ ի դարձին Բէդրուպուրիէ հանդիսաւոր կերպով Բարիզ մանելէ և Ժողովրդային հանդէսներով ընդունուելէ ետք, յաջորդ օրը Հավր գնաց հանգստանալու:

— Հակառակ միւս մեծ Տէրութեանց հաւանութեան, Գերմանիա ծանուցեր է թէ ինք կը հակառակի որ Յունաստան փոխառութիւն մը կնքէ պատերազմական տուգանքին վճարման համար: Հետեւաբար, Թուրքիոյ և Յունաստանի միջեւ հաշտութեան կնքման բանակցութիւնները կը մնան առկա և անորոշ:

— Հնդկաստանի մէջ տեղի ունեցած հակադրական շարժման մասին հետեւեալը կը հաղորդեն Լոնտոնէն:

Սըր Հանրի Մորթիմըր Տիւրան՝ Ռիւթէրի ներկայացուցչին հետ տեսակցութեան մը միջոցին յայտարարեց թէ կացութիւնը ծանր է արդարեւ և կերեւի որ շատ մարդ զոհել և մեծագումար դրամ ծախսել հարկ պիտի ըլլայ խաղաղութեան վերահաստատման համար, սակայն հնդկական բանակը կը բաւէ ստոր: Հաւանական չէ որ, յարեր է, Աֆղանիստանի էմիրը իր յարաբերութիւնները խզէ մեզի հետ, բայց միւսնոյն ատեն հաւանական ալ չէ իրմէ խնդրելն որ օգնէ մեզի:

— Սիւլայէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պէլուճիստանի անգլիական պահապան զօրքը շարդուել է: Մալապատի եզերաց իւրամ ցեղերը ոտքի ելեր են:

— Իտալիոյ թագաւորն ու թագուհին Համպուրկ կերթան՝ Գերմանիոյ կայսեր հետ տեսնուելու:

— Կ. Պոլսէն կը գրեն Ֆրանսէօրքէր Չայքունկին. «Դեսպանական շրջանակներու մէջ

հաստատ կերպով կը հաւատեն թէ Պ. Նէ-
լիտովի ծանուցեր է Դրան որ Ռուսիա չի պի-
տի թողարկել Պուլկարիոյ և Թուրքիոյ միջեւ
որ և է ուղղակի համաձայնութեան կնքումը,
առանց իր գիտակցութեան: Նոյն չըջանակ-
ներուն մէջ շատ ուշադրութիւն գրաւեր է
սա պարագան թէ, Պուլկարիոյ սերպիական գե-
պանը՝ Պ. Նէլիտովի մեկնման առթիւ անոր
ի պատիւ առաւ սեղանին հրաւիրած էր
ամբողջ դեսպանական մարմինը, բացի պուլ-
կարական գործակալաւորէն:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ձակագիւղէն առնուած նորագոյն լուրե-
րու նայելով, երեքշաբթի գիշերուան հակա-
քրիստոնէական ցոյցերուն առաջ բերած յու-
զումը փարատած չէ տակաւին. եւրոպացի և
յոյն տարրը երկիւղի տպաւորութեան տակ կը
գտնուին, փողոցներուն մէջ արար խուժանին
սպառնական երեւոյթին պատճառաւ: Ոստի-
կանական խիստ միջոցներու պէտք կայ:

—Էմիլըն Կազէթի մէջ կը կարդանք.
«բան մը որ օրինակի համար գէշ կը հնչէ ա-
կանջի, այս չորեքշաբթի օր հրատարակուած
արաբերէն տետրակի մը երեւումն է զոր գը-
րած է Խալիլին պսակաւոր բանաստեղծը՝ Ահ-
մէտ Շէքերի: Հեղինակը իր քերթուածը սկը-
սած է շնորհաւորական ուղերձ մը ուղղելով
Սուլթանին՝ հայերու կոտորածին առթիւ»:

—Եւրոպական նախարար Մազլում փա-
շայի տեղ որ արձակուողով եւրոպա ուղեւո-
րեցաւ, նոյն պաշտօնը փոխանորդաբար պի-
տի վարէ պատերազմական նախարար Ապպա-
նի փաշա:

—Ֆառ Տ'Ալեքսանտրի մէջ կը կարդանք.
«Երեքշաբթի օրը, եզերապահները երկու ծը-
րար տինամիթ գտան փոսի մը մէջ պահուած,
Սթանիսլայի մօտ, Մոնթազհի պալատին
մօտերը: Կիմանանք թէ նոյն օրը մաս մը տի-
նամիթ ալ գրաւուեր է Աղեքսանդրի մար-
սատան մէջ: Անտարակոյս մարտախոյսներ փոր-
ձած էին ներմուծել այդ պայթուցիկ նիւթը
զայն ձկնորսներուն վաճառելու համար: Յայտ-
նի է թէ տինամիթի միջոցաւ մեծաքանակ
ձուկ բնաջինջ կըլլուի և թէ անոր գործածու-
թիւնը արգելուած է ձկնորսութեան մէջ»:

—Աղեքսանդրի պատժական ատենանը
նախընթաց օր դատեց՝ օգոստոս 14ին Աթ-
թարին փողոցին մէջ պատահած չիթովութեան
առթիւ ձերբակալուած անձերը: Օսման Սու-
էֆ դատապարտուեցաւ 20 օրուան բանտար-
կութեան՝ ոստիկան մը անարգած ըլլալուն
համար: Ուրիշ չորս արաբներ 30 օրուան զրու-
տուգանքի՝ քանի մը խանութներ կոտորած ու
անոնց տէրերուն վրայ յարձակած ըլլանուն
համար: Միւս ամբաստանեալները արձակուե-
ցան, ապացոյց չի գտնուելուն:

—Եգիպտոսի հեղինակական գիւնագի-
տական գործակալար Պ. Կրիլարիս նախըն-
թաց առաւօտ երկար տեսակցութիւն մը ու-
նեցաւ ռուսական գործակալարի փոխանորդ
Պ. Բրօնէպրանսքիի և անգլ. ընդհ. հիւպատոս
Պ. Ալպէնի հետ, Ձակագիւղի և Սիւէզի բնիկ
ժողովրդեան կողմէ ցոյցերուն դէմ եղած
ցոյցին առթիւ: Պ. Կրիլարիս կը պահանջէ որ

խիստ քննութիւն մը բացուի և ցոյցին հեղի-
նակները պատժուին: Պ. Բրօնէպրանսքի այս
մտօք պէտք եղած ձեռնարկն ըրած է ե-
գիպտոսի արտաքին գործոց նախարարութեան
մօտ:

Ա.ՊՈՒ ՆԱՏՏԱՐԱ

Ապու-Նատտարա որուն գէթ անունը ա-
մեն եգիպտացիներու ծանօթ է և որ «Եգիպ-
տաւէր» համբաւը ունի... Մուսթաֆա Բա-
մէլի պէս, հետեւեալ կերպով կը պատմէ իր
ծննդեան պարագաները, որ մարդու ծիծաղը
չարժեքէ ուրիշ բանի չեն կրնար ծառայել:

Ապու Նատտարա զեռ չի ծնած դատապարտ-
ուած էր հակառակութիւններ ունենալու: Հայրը,
Ռաֆայէլ Սանուա էֆէնդի որ ելմտական նախա-
րարութեան մէջ բարձր պաշտօն մը ունէր, Գահի-
րէի պարկէշտ և ագիւ աղջկան մը հետ ամուս-
նացած էր և այդ ամուսնութենէն ունեցած էր չորս
զեղեցիկ զաւակներ:

Այն տունը ուր երբեմն երջանկութիւնը կը ճա-
ռագայթէր յանկարծ սուգի բնակարան մը դարձաւ:
Համաճարակ մը առաւ տարաւ այդ չորս սիրասուն
արարածները և կսկիծի ու սուգի մէջ գահավիժեց
Ռաֆայէլ էֆէնդին և սիթի Սարան:

Բայց օր մը Ապու Նատտարայի մայրը իր ա-
մուսնոյն ծանոց թէ Աստուծոյ ողորմութեամբ իր
արգանդին մէջ կը կրէր հինգերորդ զաւակ մը, ա-
պագայ Ապու Նատտարան:

Ինչ ամիս ետքը երբ դայեակը նորածին մա-
նուկը լուսով սպասուհիի մը կը յանձնէր, այս
վերջինը անգլուշ ինչպէս տմեն սպասուհի, մանու-
կը ձեռքէն ձգեց որ գետին իյնայ:

Մայրը աղիւղորմ՝ ճիշդ կարճակէր. և երբ
տղեկը գետնէն վերցուցին արեւնաթաթաւ, գլուխը
պատուած, չորս կողմը կոտորած և նուազած վի-
ճակի մը մէջ կը գտնուէր:

Երեք օր շարունակ հոգեվարք էր մանուկը.
մահուան հրեշտակը կը սուսառնէր այդ տանը վրայ:
Բայց Աստուծոյ թող չի տուաւ որ ապագայ հայրե-
նասէրը իր խոնձարորին մէջ ոչնչանայ:

Երեք օր ետքը վերջերը գոցուեցան և տղան
սկսաւ հոգի առնել: Արեւը իր չըջան կատարեց
նորածին չէխին երակներուն մէջ, սիրտը սկսաւ
բարակել և վերջապէս մայրը կրցաւ համբոյրներով
ծածկել այդ աղաղուն մարմինը որ իր բողբոջը մէջ
կը խայտար:

Ձի գիւտուիր թէ այդ անկումովն պատճառաւ
թէ ժառանգական օրինօք, տղուն տեսողական կա-
րողութիւնը խիստ տկար մնաց:

Ահա ինչո՞ւ իր ամենէն թարմ հոսակէն սկսեալ
Ապու Նատտարա ակնոց գործածելու հարկին մէջ
գտնուած է, իր անունն ալ արդէն կը նշանակէ
«ակնոցաւոր մարդ»:

Ծնած ատենը Եագուպ անունը տուին իրեն,
բայց ինքը կամայ կամայ չէ յան վերածեց զայն:

Աւասիկ Ապու Նատտարայի առասպելական
պատմութիւնը:

Դիշի տէր մէկը պիտի կրնար խիստ ծի-
ծաղաշարժ Օքէրա ֆոլիի շիպրէթթօ մը գրել
եթէ գրքի մը մէջ ամփոփէր Ապու Նատտա-
րայի ծնունդը, Մուսթաֆա Բամէլի ճառերը
և Մուրտա պէյի... ինթէրվիուն:

ԱՅՍՕՐՈՒԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ ՍՈՒՐԶԱՆԴԱԿԷՆ

Թօքաթ զրկուած դատական յանձնա-
նաժողովն անցեալ երեքշաբթի Կ. Պոլիս վե-
րադարձեր է:

Գարբերդէն օգոստոս 7/19 թուականով կը
գրեն Կ. Պոլսոյ թերթերուն թէ նահանգին կեդ-
րոնական բանտէն արձակուել են երեք Արաբ-
կիրցի երիտասարդներ որոնք եօթը տարի է ի
վեր բանտարկուած էին: Ասոնց անուններն

են՝ Դանիէլ Հացագործեան, Դրիգոր Մըսըր-
լեան, Վարդան Պոյաճեան:

Պոլսոյ թերթերը իրենց անցեալ ուրբաթի
թիւին մէջ կը ծանուցանեն թէ օգոստոս 6/18ի
դէպքին առթիւ ձերբակալուած անձանց դա-
տաստանը հրապարակաւ պիտի տեսնուէր եր-
կուշաբթի 30 օգոստոս:

Եթէ ճիշդ է այս տեղեկութիւն, ուրեմն
կանխահաս էր եւրոպացի թղթակիցներու այն
լուրը թէ դէպքին հեղինակները արդէն իսկ
մահուան դատապարտուած են:

Բարեյիշատակ Սանասարեանցի կտակա-
կատար Պ. Կարապետ Եղեանց որ ուղեւորու-
թիւն մը կը կատարէ յեւրոպա, մօտերս Կ.
Պոլիս պիտի այցելէ:

Ծ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Դահլիշ, 1 Սեպտեմբեր 1897

Տ.

Ստորագրեալս՝ Թադէոս Նահապետեան
եւ Բարթիկ Նահապետեան պատիւ ունինք
ծանուցանելու թէ մեր՝

Թ. Ե. Բ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ԵՂԲՈՐԲ

անուանը ծանօթ ընկերութիւնը, բոլակա-
նէս սկսեալ յոժուած է երկրորդանի հա-
ւանութեամբ:

Այսուհետեւ երկուս զաւս պիտի շա-
րունակենք մեր գործառնորթները՝ մեր
անհասկան հաշոյն եւ անձնական ան-
ուան սակ:

Տիւր Թադէոս Նահապետեան ստանձ-
նած է մեր Կ. Պոլսոյ սակ պահանջները
գանձել եւ պատրաստ վճարել:

Տիւր Բարթիկ Նահապետեան ստանձ-
նած է մեր Դահլիշի սակ պահանջները
գանձել եւ պատրաստ վճարել:

Հաճեցե՛ք ընդունիլ, Տ. մեր յարգանաց
հարստիւն

ԹԱԴԵՈՍ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
ԲԱՐԹԻԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ՓԱՐՈՍ»Ի

Յ. Բ. Մանուռա. — Ստացանք ձեր նամակը և
յօդուածը: Շատ իրաւունք ունիք. ձեր դիտողու-
թիւնները արդարացի են, սակայն այդ տեսակ մար-
դոց և այդ տեսակ արարքներու վրայ խօսիլն ան-
գամ աւելորդ է:

Խոստացուած նկարագրութիւնը կրնաք մեզ
ղրկել:

Ուսանողական Միութիւն. Բարիդ. — Ձեր զը-
կածը ստացանք:

Գ. Թ. Դահլիշ. — Մեր որոշումները անխախտ
են, մի յոգնիք:

Վ. . . . Անվիւս — «Սպասել և յուսալ» շատ սի-
րուն դարձուածք մըն է. . . . վիպասանութիւններու
մէջ. բայց գործնական կեանքի մէջ «աշխատիլ և
տոկալ»ը աւելի ճիշդ չէ՞

ԱՆԺԽԱՆԱԿԱՆԻ ՄԸ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Ա Ն Ճ Ի Օ Ի Ի Լ Օ

Սպանիոյ նախարարապետ Բանուլաս տէլ
Բասթիլիւյի սպանիշին Անճիլիւյի գլխատման
պարագաներուն վրայ սպանիական թերթերը
հետեւեալ մանրամասնութիւնները կուտան
որոնք այժմէութեան տեսակէտով զուրկ չեն
չահեկանութենէ:

Այսօր, 20 օգոստոս, Անճիլիւյի վերջին օրն է:
Դատապարտեալը տեղեակ է ասոր, բայց բնաւ

ԴՐԱՄԱՏՈՒՆ
ԱԼԷՔՍԱՆՏ Ժ. ԲԵՍՍԱՅՈՂԼՈՒ
Գ Ա Ն Ի Ր Է

Գնում և վաճառում արժեթուղթերու.—
Կանխաձեռն արժեթուղթերու վրայ.— Կոտան-
ձնէ յաճախորդներու հաշւոյն համար գան-
ձումներ ընել եղիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ.— Պայմանաժամա-
ւոր վաճառում ամեն տեսակ պարզեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով :
Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դի-
մել Պուրաք փողոց Եգիպտական հեռագրատան դէմ
Բէտմագդոյն դրամատունը :

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒՆՑԱՐԱՐ

Էօղպէքիյէ, Պիւլպիւլեանի օթէլին քովըն-
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն զփուլարահանները զահագնելու
եղանակաւ կ'արդուիէ շապիկներ և այլն սո-
վորական զիններով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵՅՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	օմ նիպ.	կէս ուղ.	օմ նիպ.	էքսորէս	օմ նիպ.	էքսորէս	օմ նիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1,2,3 կգ.	1, 2 կգ.	1 2 3	կարգ
Գահիրէ	մեկ.	4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	էրեկոյ	—	—	—	էրեկոյ	—	—	—	—	—
	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղէքսանդրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	—	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		օմ նիպ.	կէս ուղ.	օմ նիպ.	էքսորէս	խառն	օմ նիպ.	էքսորէս	օմ նիպիւս	
		1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	1 2 կգ.	1 2 3	կարգ
Աղէքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	առտ.	էրեկ.	էրեկ.	էրեկ.	էրեկ.
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	9 20	2 30	4 15	6 15	11 —
	»	—	—	—	—	էրեկ.	էրեկ.	էրեկ.	էրեկ.	առտ.
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ			ԿԱՅԱՐԱՆՔ		
		ԱՌԱՌՑ			ԱՌԱՌՑ
		ԵՐԵԿՈՅ			ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	Սիւէզ (քորափ)	մեկ.	9 50
Պէնհա	ժամ.	12 28	» կայարան	»	—
	մեկ.	12 33		»	3 30
Ջակաղիկ	ժամ.	1 34	Իսմաիլիա	»	էրեկոյ
	մեկ.	1 44		»	1 20
Իսմաիլիա	մեկ.	3 40	Ջակաղիկ	ժամ.	3 7
	»	»		մեկ.	3 17
Սիւէզ կայարան	ժամ.	—	Պէնհա	ժամ.	4 13
	»	»		մեկ.	4 17
Տօք (քորափ)	ժամ.	6 55	Գահիրէ	ժամ.	5 5

յուզմունք չի արտայայտեր. ընդհակառակը մեծ պա-
ղարկումներն ցոյց կուտայ :

Շարունակ կը գանգատի կղերին իրեն ըրած
այցելութիւններէն: Թե՛ն մէջ զղջում մի սպասէք, ը-
սած է անոնց. բանի որ զիս բանտէն չէք կրնար
հանել, գործերնուդ զացէք: Աստուծոյ հետ ես գոր-
ծըս կրնամ կարգադրել:

Կրօնքի ամեն միտմարտութիւնները մերժած է,
և միշտ կը յայտարարէ թէ իր սփիւրին մէջ մեղա-
կից չունի և թէ իր մահուան վրէժը պիտի տանուէր:

Մինչեւ իրիկուն չատ ակորժանօք ճաշեց և
չատ հանգարտ կերպով անցուց իր վերջի գիշերը:

Այս ատու մօրը նամակ մը գրեց:

Որքան որ իր բանտարկութեան միջոցին լա-
կուտէր ու կը խմէր, սակայն բանի մը օրուան մէջ
խիտ չատ նիհարցած է:

Իր արդուգործին խնամք տարած է այս առ-
տու. թէ՛ն իր տխուր վախճանին գիտակից է, բայց
և այնպէս ուզած է պատշաճ կերպով ներկայանալ
կախաղանին առջեւ:

Բայց վերջի վայրկեանն իր սովորական հագուստ-
ները հանելով հարկ եղաւ դատապարտեալներու յա-
տուկ շապիկը հագցնել:

Անմիջապէս ետքը կապելու (garrotage) դժ-
ճողութիւնը սկսաւ:

Garrotage-ը միայն Սպանիոյ և Բօթնիկալի
մէջ գործածուած չարչարանի մէկ տեսակն է որ
հետեւեալ արշիմաններու տակ կը կատարուի:

Գլխատման համար որոշուած օրէն քառասունը-
ութ ժամ առաջ, այսինքն վճիռը տրուելէն անմի-
ջապէս ետքը, դատապարտեալը մատուռի մը մէջ
կը դնեն քաշանաններու ընկերակցութեամբ թող տա-
լու համար որ հոն ազօթէ և պատրաստուի մահուան:

Չարդէտ օրը երբ կը հասնի, դատավճիռը
անգամ մը եւս կը կարգադրուի մահապարտին որ վեր-
ջին հարցաքննութեան մը կենթարկուի:

Հարցաքննութիւնը աւարտելուն պէս մէկ ջորի-
ով լծուած սեւ կառքի մը մէջ կը դրուի դատա-
պարտեալը և ուղղակի կառաջնորդուի կախաղանին
սարքուած վայրը:

Կախաղանը բարձր պատուանդանի մը վրայ
կանգնուած է որուն համեմատ համար բանի մը սան-
դուխներէ վեր ելելէ հարկ է:

Դատապարտեալը կը նստեցնեն ակունքի մը վրայ
որուն ճիւղ վերեւը մահաժողովուրդի կախուած է:

Դանիմը, նշանը տրուելուն պէս, զսպանակ մը
կը դարձնէ և ահա այդ օղակը կամայ մը վար իջ-
նալով կը կատարէ իր մահապարտու պաշտօնը:

Անճիօլիը առանց բռն մը արտասանելու թող
տուաւ որ այս ամեն տխրադրեցիկ գործողութիւն-
ները կատարուին իր վրայ:

Ա Ջ Դ

Տիկին Սոֆիյ Լգգապետեան, մանկաբարձ, վկայեալ
կայսերական վարժարանէն, այժմ բնակութիւնը Դա-
հիէ հաստատած քլլայով, պատիւ ունի ծանուցա-
նել հայ հասարակութեան որ պատշաճ է իր խնամք-
ները տալ իրեն պէ՛տք ունեցողներուն:

Իր եկեղեցական կողմէն փորձառութիւնը եւ խղ-
ճամբս աշխատութիւնը զինքը բազմիս առաջնա-
կարգ մանկաբարձներու կարգը կանցընեն:

Դիմել Շուպրա, Չամաշիւր փողոց քիւ 12: Եւ-
կուաքքի եւ հինգեքաքքի օրերը առաւօտուն կը գրք-
նուի Սարաֆեան դեղաբանը ի Պեն-էլ-Սուրէն:

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Ասորագրեալս պատիւ ունիմ ծանուցանելու քե-
պատշաճ եւ դիւրամասշտի տկոսով փոխառու-
քիւն ընել մեր հայ գաղթականներուն որոնք գրաւ իր
ձեռքին դժուարութեան կը հանդիպին խղճամբս սա-
րաֆ մը գտնելու:

Խանութիւն մէջ կը վաճառուին նաեւ տեղական
միջակահաճութեանց տոմսեր, ամսական վճարում
ներով:

Ս. ԶՈՒԻՐԿ ԵՂՂՈՒ

Շարա Ապս-էլ-Ազիզ, բաւրճանի կից

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Իրագրի